

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒ- ԹԻՒՆՔ ՅԱՓՐԻԿԷ .

ԼԻՎԻՆԿՍԻՆԻ ԳԻՒՏՆ

Աշխարհագրական ընկերութեանց տարուէ տարի աճիլն, (որոց զլիսաւորները յիշեցինք, յերես 253), և 5000էն աւելի աշխարհագրաց և ընկերակցաց բազմութիւնն, յայտնի նշան է այն բարոյական զգացման՝ զոր ունի և վայել է որ ունենայ մարդ՝ ծանօթութեան իր նմանեաց՝ ի զանազան կողմանս երկրի, և նոյն իսկ անոնց և կենդանեաց բնակարան երկրին զանազան կողմանցը, դրիցը, միով բանիւ ազգագրական, աշխարհագրիտական և երկրաբանական կամ բնական յատկութեանց: Այսպիսի ծանօթութեանց քննութիւնը այնքան հին են՝ որքան մարդկանց սըփառումն յերեսս երկրի. գոնէ Եգիպտոսի փարաւոնեանց, կարքեղոնացւոց, Աղեքսանդրի և այլոց ընել տուած հետախուզութիւնները ծանօթ և յիշուած են շատ դարելով յառաջ քան զթուական փրկչին մերոյ: Եւ յետասոր՝ ամեն դարուց մէջ ալ ինչպէս եղած են աշխարհագիրք՝ այսպէս և աշխարհագրիչնք կամ խնդրակք. բայց մեզի մօտ դարուց մէջ աւելի շատ և որոշ քրննութիւնք եղած են, մինչև ամբողջ նոր աշխարհներ ալ գտան, (Ամերիկա, Ովկիանիա). որոց մասերն դեռ նորանոր հետաքննութեանց առիթ և ասպարէզ են: Եւ ոչ միայն անոնց՝ այլ և հին Ասիոյ աշխարհին խորերը և ծայրերը դեռ շատ քննելիք և յայտնելիք ունին. և զիտուն ուղևորք զրեթէ ամեն տարի նորանոր ծանօթութիւններ կ'աւելցընեն:

Թէպէտ և այս ամեն կողմերն ալ արժանիք են, այլ մարդկան հետաքննութիւնն աւելի այն կողմերու կը դառնայ՝ որոց ըլլալն յայտնի է, բայց ինչպէս ըլլալն անյայտ, որք մեծ ընդարձակութիւն մ'ալ ունին, և անով մեծ կամ նոր երևոյթ մը կը ձեւացընեն. որք և ըստ կլիմայից ծայրագոյն աստիճան մ'ունենալով (ցուրտ կամ տաք) նորատեսիլ հանգամանք, բերք և կենաց տնտեսութիւն մը պիտի ունենան. կամ թէ բնական դրիւք և հեռաւորութեամբ դժուարամօտենալի ըլլալով մեծ ոյժ մը կը պահանջեն յաղթելու դժուարութեանց, փլցընելու արգելիչ պարիսպները, և բանալու գաղտնեաց դրուկը. և գաղտնիքն քանի որ գաղտնիք է՝ միշտ մեծ իմն, զարմանալի և բաղձալի թուի. և աշխատութեամբ ձեռք բերուածն՝ միշտ փառաւոր և զուարճալի: Արդ յայտ է ամեն քիչ շատ աշխարհագրութիւն ընթերցողաց ալ՝ որ երկրիս երկու հակադէմ կամ աննման, միանգամայն և դժուարամատոյց կողմերն դրաւած են զիանոց և անգիտնոց հետաքննութիւնը. առջիններուն ջանքը, երկուքին ալ վայելքը. և են երկրագնտիս երկու բևեռական ծայրերը, և միջակողմն գօտին. մէկն սաստիկ ցըրտութեամբ, միւսն տաքութեամբ տոգորեալ. — տաք կողմերն աւելի դիւրամատոյց են, զի այնչափ սաստիկ չեն, և ոչ այնքան հզօր բնական արգելքներ ունին. անոր համար երկրիս երեսին մէկ կողմն իր այրեցեալ յատկութեամբն ալ ոչ միայն ՚ի հնուց ծանօթացեալ է՝ այլ և բազմաբնակ, և այս է Ասիոյ Հնդկաստան աշխարհն. իսկ միւս կողմն ալ թէ և ուշ յայտնուած (Ամերիկա) այլ շուտ ալ ծանուցուած է, մանաւանդ որ այն այրեցեալ կլիմային

տակ շատ ընդարձակ ցամաք չկայ յԱմերիկա ինչպէս յԱսիա :

Իսկ այս երկուց մեծագոյն աշխարհաբաժնից մէջ կայ երրորդն ալ Ափրիկէն, հինն բայց միշտ զարմանալին Ափրիկէ . որոյ համար առակ ալ եղած էր ըսել, թէ միշտ նորանոր բաներ կը ծնանի : Այս մեծ ցամաքակղզի աշխարհաբաժնին բոլորախորժանուցուած է, և շատերն շրջապատած են նաւարկութեամբ, այլ մէջերկրայն կամ խորերն դեռ գրեթէ կիսով չափ անծանօթ . թէ և հազարաւոր տարիներէ վեր ջանք եղած է ծանօթութեան, այլ ոչ շատ ժրութեամբ կամ գիտութեամբ . կլիմային տաքութիւնն, գետնին բնական դիրքն, անապատքն, մեծամեծ լճեր և գետերն, գազաններն, և ալ աւելի՛ այն կողմերու հին սերնդեամբ առաջ եկած վայրենի կամ ապուշ բնակիչքն՝ արդելք եղած են՝ բարեկիրթ և գիտնագոյն մարդկանց հաղորդակցութեան : Այլ նոր ժամանակաց յառաջագիմութիւնն ՚ի քաղաքականութեան, յարուեստս և ՚ի գիտութիւնս՝ հիմայ անդու և անվհատ կը ջանայ կ'աշխատի՝ Ափրիկէի տապագնաց դաշտերն ալ կոխել, անոր հազարամեայ ծածկոյթները փարատել, բանալ խորհրդական վարագոյրը, գիտնալ նեղոսական գաղտնիքը, այսինքն Եգիպտոսի հրաշալիքն և գանձը՝ Նեղոս գետոյն ընթացքը և ծագումը գտնել . ինչպէս որ միւս կողմէ ալ Բևեռաց սառերուն յաղթել և երկրիս ծայրը տնկել գիտութեան և քրննութեան յաղթական դրօշը, որ է մարդկային կարողութեան յաղթանակն :

Թողլով առ այժմ՝ այս սառնապատ սահմանները՝ կենանք պահ մը ՚ի միջակողմն՝ երկրի, Ափրիկէի խորերուն քննութեանց վրայ, որ այս դարուս ամենէն մեծ աշխարհագրական քննութիւն և գիւտ համարուին . վասն զի և ամեն ատենէ աւելի այս ատեն և մանաւանդ դարուս կիսէն վերջն եղան Ափրիկէի մեծագոյն հետաքննութիւնք և գիւտք, ՚ի ձեռն համբերող և շարքաշ գիտնականաց Եւրոպացւոց, որք և ՚ի շարս գիտ

նոց և վաստակաւորաց մեծ անուն թողուցին : Ասոնց մէջ ալ ամենէն անուանին, և քանի մը տարիէ վեր իբրև առակ և մեծ հոգոյ առիթ եղածն է Լիվինկսդոն Անգղիացին . որ Ափրիկէի գաղտնիքը փնտռելու ատեն՝ ինքն իսկ կորսուելով փնտռուելու առիթ եղաւ, և իբրև նոր երկրի գիւտ մ'եղաւ իրեն գտուիլն :

Այս հետաքննող և հետաքննելի անձն ծնած է ՚ի Սկովտիա, յամի 1815 . առաջ բժշկութիւն սովորելով՝ անոր օժանդակ բնական գիտութեամբք՝ իր ապագայ քննութեանց կարևոր միջոց մը ստացեր էր կանխաւ . յետոյ իր կրօնական դաւանութեան պաշտօնեայ ըլլալով՝ իբրև քարոզիչ գնաց յԱփրիկէ յամի 1840, Բարեյուսոյ գլխոյն կողմերը և ՚ի Չամպէզի պտրտելով քանի մը տարի՝ կրօնական առաքելութեամբ, տեղւոյն կլիմային և բնակչաց բարուց, սովորութեանց և լեզուի վարժութիւն ստացաւ, որովք կրցաւ գիւրացընել իր առաջին և քաջանշան ուղևորութիւնը՝ 1852-6 տարիներու միջոց . առաջին Եւրոպացի գիտնականն եղաւ որ Ափրիկէի մէկ կողմէն (արեւմուտքէն), մինչև ՚ի միւսը կտրեց անցաւ (յարևելակողմն), Գոնկոյէն ՚ի Մոզամպիք, և այն միջոցի տարածուած Չամպէզի մեծ գետոյն անծանօթ հովիտը՝ քիչ շատ ծանօթացուց ամենայն աշխարհաքրննաց . և իրաւամբք մեծ վարկ և համբաւ, գովութիւն և յաղթանակ ժառանգեց անոնց ժողովքներէն : Ասոր վրայ քաջալերուած՝ երկրորդ ուղևորութիւն մ'ալ ըրաւ յամս 1858-61, Չամպէզոյ ստորին ընթացքն աւելի ստուգելու, ինչպէս նաև անոր օժանդակ Շիրէ գետոյն . և գտաւ ասոր շտեմարան կամ ալբիւր երկայն և մեծ լիճ մը՝ իբր 10-14° հարաւային լայնութեան աստիճանաց տակ . զոր թէ և հարիւրաւոր տարի առաջ Բորդուգալցիք ճանչցեր և Մարաւի անուամբ նշանակեր էին, բայց այնչափ մթին և աղաւաղ էր անոնց տուած ծանօթութիւնը՝ մինչև աշխարհագիծք ոմանք և

ոչ կը նշանակէին իրենց տախտակաց վրայ: Այս լիճս Նիասաս կոչեցաւ հիմայ, որ տեղացեաց լեզուաւ բուն լիճ կամ ժողով ջրոց կը նշանակէ: Այս երկրորդ գիւտէն և յաղթանակէն վերջը՝ Լիվինկսդոն ձեռք զարկաւ երրորդի մը՝ յամին 1865, որոյ դեռ մէջն է, և կատարածն անստոյգ. բայց գոնէ իր ութամեայ երկայնամիտ և չարակիր համբերութեամբն զարմանալի, և իր կորստեամբ կամ լուծեամբն և գիւտովն նշանաւոր:

Այս անգամ Լիվինկսդոն առաջադրած էր քննել այս քանի մը բաները. որ է յիշեալ Մարաւի լճին և յամի 1358 յայտնուած Թանկանիգա լճին միջոցը. այս լիճս գտեր էին Պըրրոն և Սբէք ուղևորք անգղիացիք, այլ մանր հետազոտութիւն ըրած չէին. ուստի զայն լաւ մը քննել իրեն մէկ նպատակ ընտրեց Լիվինկսդոն. անկէց ալ անոր արևմտեան կողմը մինչև յԱտլանդեան Ովկիանոս ընդարձակել քննութիւնը. ապա դառնալ անոր հիւսիսակողմը, ելնել դէպ 'ի հասարակածին գիծը, և Նեղոսի աղբերաց առակաւոր խնդիրը լուծել կամ պարզել: Այսքան կարևոր և դժուարին խնդրոց յարմար պատրաստութեանց համար հարկ համարեցաւ երթալ յԱնգղիոյ 'ի Պոմպայի Հընդկաց, և հոն ամեն հարկաւոր ճանչցածն առնելով նաւեց ելաւ Ափրիկէի արևելեան ափունքը յամսեան մարտի, 1866: Չանգիպարի ափունքէն եկաւ Ռովու մա կոչուած գետը մտաւ նաւով (10-12° հարաւային լայնութեան տակ), ելաւ շրջապատեց Մարաւի լճին արևմտեան և հարաւային կողմերը. բայց երբ յարևմտակողմն անցաւ՝ իր ուղեկիցք և օգնական տեղացիք՝ ոչ միայն թողին զինքն ու դարձան 'ի Չանգիպար, այլ և չար լուր մը հանեցին թէ Լիվինկսդոն սպանուած ըլլայ, մինչդեռ սա իր մնացեալ քանի մ'ընկերօք լճին բոլորտիքը պատելով դարձաւ յարևմուտք, Պեմպա կոչուած տեղ մը՝ 1370 մեղր բարձր յերեսաց ծովու, ուսկից կարաւանի ձեռքով նամակ հասուց 'ի Չան-

գիպար և յԵւրոպա, գրուած յ' 3 փետրուարի 1867: Յետ տարի մը լուծեան նոր թուղթ մը հասաւ իրմէ 'ի Չանգիպար, գրուած 'ի դեկտեմբերի, 1867, Թանկանիգայ լճին մօտ Գազամպէ ըսուած քաղքէն, որոյ բնիկ անունն է Լունտա, իբրև հարաւային լայնութեան 8½ աստիճանի տակ. յորում կ'իմացընէր թէ այն մեծ լճին մօտերը կային ուրիշ շատ լճեր ալ, որոց երեքը տեսեր էր. քանի մը գետեր ալ կը նշանակէ, որոց մէկը՝ Լուֆիրա՝ կարծեց Նեղոսի հարաւագոյն աղբիւր, այլ այս չստուգեցաւ: Յաջորդ տարուոյ (1868) յուլիսի 8ին ալ նամակ մը գրեց նոյն քաղքէն. անկէ ետև չորս տարի լուծիւն, անստուգութիւն կասկած և վախ տիրեց յԵւրոպա իր վրայօք. թէպէտ և տարուան մը միջոց 3/4 նամակ գրեր էր, բայց մէկն ալ չհասաւ յԵւրոպա, միայն երբեմն արաբացի ճամբորդներէ խառնակ լուրեր կու գային թէ ճերմակ ճամբորդն այս կամ այն տեղ է, կարօտ և տկար: Անգղիացի հիւպատք կամ վաճառականք ալ տարակուսանօք կ'իմացընէին զայն յԵւրոպա, աւելցընելով տարակոյս ու վախի նշուան որ իրենց Աշխարհագրական ընկերութեան նախագահն՝ բանիբունն Ռատլինսըն առաջարկեց մարդ խաւրել փնտռելու զԼիվինկսդոն. շուտ մը գումար մը հաւաքուեցաւ, և փնտռողաց գլուխ անցաւ ճամբորդին որդին Օզվալտ, հետն ալ երկու փորձ նաւասպայ:

Փետրուարի սկիզբը, 1872ի ճամբայ ելան, գացին 'ի Գահիրէ և 'ի Սուէզ, և կարաւանաւ 'ի Չանգիպար. այլ անկէ անդին չանցան, ինչ պատճառաւ դեռ չի գիտցուիր. բայց այսպէս համբաւեցաւ թէ Լիվինկսդոնի ողջութեանը վերայ լուր առին. և յիրաւի ալ առին իրենցմէ յաջող և ճարպիկ փնտռողէ մը: Սա է ամերիկացի լրագրողն Սդանլէյ, որ յամի 1870 յԵւրոպա կը պտրտէր և լուրեր հաւաքելով կը խաւրէր իր գլխաւորին. սա ալ նոյն տարին եկեր էր 'ի Բարիզ, և տեսնելով զիտնոց մէջ եղած մեծ հետաքննու-

Թիւնը Լիվինկսդոնի պատճառաւ, ամե-
րիկացի յանդգնութեամբ կամ արտա-
ուոց մտածութեամբ ուղեց իր գործա-
կցաց մէկը խաւրել, փնտռել տալ, կամ
գտնել զնա կամ նոր լուրեր տալ. և
այս բանս յանձնեց Սդանլէյի, որ 1871
տարւոյն սկիզբը հասաւ 'ի Չանդիպար.
հարցուց տեղեկացաւ ինչ կարծիք որ
կար Լիվինկսդոնի վրայօք. ընկերներ և
առաջնորդներ վարձեց, ճամբայ ընկաւ,
յունիսի մէջ հասաւ Ռենիանքեմպէ կո-
չուած մեծ քաղաքաւան մը Արաբայ-
ուր ստիպուեցաւ քանի մ'ամիս մնա-
լու. վասն զի այն կողմերուն տիրող
թաղաւոր մը թող չէր տար իր եր-
կրէն անցնիլ դէպ 'ի Թանկանիգոս եր-
թալու. և թէպէտ Սդանլէյ զէնքով ալ
փորձեց արգելքը վերցընելու, այլ յաղ-
թուեցաւ, հիւանդացաւ. և հարկ եղաւ
որ թշնամուոյն երկրին բոլորտիքը պտը-
տելով հասնի յերեք նոյեմբերի յՈւճի-
ճի յեզր լծին՝ յարևելակողմը. ուր յաղ-
թանակի հանդիսով մտաւ, զինաչար-
ժութեամբ և նուագարաններով, որով
բոլոր քաղաքացիք դուրս ելան: Անոնց
մէջ Արաբացուոց գունդ մ'ալ կար, և
ահա այս գնդին մէջ երևցաւ ճերմա-
կամորթ մարդ մը դեղին դիմօք և աղէ-
բեկ մօրուօք, կարմիր ասուեայ բաճկո-
նաւ, նաւաստեայ ոսկէշուրջ գլխար-
կով. « Մէկէն ճանչցայ զԼիվինկսդոն,
կ'ըսէ Սդանլէյ, և կ'ուղէի վազել զըր-
կել » . բայց ծանրութիւն մը պահել
հարկաւոր համարելով Արաբացուոց դի-
մաց, կամաց կամաց մօտեցաւ բարևեց,
« կարծեմ Տ. Լիվինկսդոնն ես », ըսե-
լով. — որուն՝ Այո՛ մը պատասխանեց
միւսն. և քանի մը ժամէ վերջը առան-
ձնանալով կրցան համարձակ և սրտա-
լիւ խօսակցիլ:

Սդանլէյ չորս ամիս կեցաւ Լիվինկս-
դոնի քով. մէկտեղ պտըտեցան Թան-
կանիգայի հիւսիսային կողմը. քննեցին
ստուգեցին, 10 օր լծին մէջ նաւարկե-
լով, ելան անոր հիւսիսային նեղ ծայ-
րը, զոր բարձր լերինք կը պատէին, և
ուր կը թափէր Ռուսիզի կոչուած գետն,
որոյ վրայ տարակոյս կար՝ թէ լծէն

եղնէ ու Ալպերդ նիանդա կոչուած մեծ
և դեռ կէս անծանօթ լիճը թափի,
բայց հիմայ ստուգեցաւ որ գետն ուրիշ
լճակէ մը գալով 'ի հիւսիսոյ՝ կը մտնէ 'ի
Թանկանիգա. այս մեծ լճին բարձրու-
թիւնն ալ յերեսաց ծովու 900 մեզր
գտան. իսկ եզերքի լեռներէն ինչուան
1500 մեզր բարձրեր կային: Մարտի
14^ն (1872) Սդանլէյ բաժնուեցաւ 'ի
Լիվինկսդոնէ, և յուլիսի 24^ն մտաւ 'ի
նաւահանգիստ Մարսիլիոյ: Իր անակըն-
կալ յաջողութիւնն այնքան զարմանա-
լի երևցաւ լսողաց՝ որ սկսան թերահա-
ւատիլ, մանաւանդ լրագրողի մը գործ
ըլլալով. բայց ուրիշ տեղեկութիւններն
և բերած նամակներն ու գրուածներն
տարակոյսը փարատելով՝ նոր և աւելի
արժանաւոր զարմանք մը բերին Սդան-
լէյի ճարտարութեան և սրտապնդու-
թեան վրայ, որ զրեթէ յաջողութեանը
հաւասար է: Երբ դարձաւ 'ի Չանդի-
պար՝ հոն գտաւ Լիվինկսդոնի որդին, և
տուաւ հօրը նամակները և օրագրու-
թիւնը, զոր աներկբայ խնդութեամբ
ընդունելով Օզվալտ՝ իրմէ բարեբաղդ
գտնողին և բերողին հետ դարձաւ յԵւ-
րոպա:

Այս յիշեալ օրագրութիւններէն դեռ
մեծ գիւտ կամ աշխարհագրական տե-
ղեկութիւն մը հրատարակուած չէ. ու-
րով չեմք կրնար ըսել թէ ինչուան հի-
մայ մեծ ճամբորդն յաջողած ըլլայ իր
գլխաւոր նպատակին, կամ առջի եր-
կու ուղևորութեան հաւասար բան մը
գտած ըլլայ. այլ յայտ է որ յիշեալ
Թանկանիգա լճին սահմանաց վրայօք,
և մանաւանդ արևմտակողման՝ ուր դեռ
եւրոպացի չէր գնացեր, բոլորովին նոր
տեղեկութիւններ առած և մասամբ հա-
ղորդած է: Իսկ իր անխոնջ և աննըկուն
հաստատամտութիւնը կը յուսացընէ
որ այսքան երկարամեայ տառապանքն
և ջանքն անպսակ և անվարձք չմնան, և
աշխարհագրական յաղթանակ մ'ալ
կանգնէ: Ուրիշ կողմանէ ալ գործոյն
դժարութիւնն լաւ ճանչնալով Անգղիա-
ցիք երկու տեղաքննին ընկերութիւն
կամ ուղևորութիւն ալ կազմեցին ան.

ցեալ տարւոյն (1872) վերջերը . մէկն կոչեցաւ Գոնկոյ-Լիվինկսոզոն , վասն զի Ափրիկէի արևմտեան կողմէն՝ Գոնկոյ գետոյն բերանէն կամ քովերէն պիտի յառաջ խաղար , անոր և Լուալապա գետոյ ընթացքը քննելու . Պ . Եունկ՝ բարեկամն Լիվինկսոզոնի՝ 2000 լիրա ստեռլին նուիրեց այս ընկերութեան : Իսկ միւս ընկերութիւնն Գամերոն և Պարդըլ գիտնականաց առաջնորդութեամբ՝ արևելեան Ափրիկոյ Չանզիպարի կողմերէն յառաջ պիտի երթայ՝ խորերը քննելու : Երկու ընկերութիւնք ալ նոյեմբերի վերջերը ճամբայ ելան , և հիմայ անշուշտ կը դեգերին այն կողմերը : — Գերմանացիք ալ ունին գիտնական խնդրակներ ՚ի միջին Ափրիկէ , որոց օգնութեան համար անցեալ տարի մնայուն ժողովք մը հաստատեցին ՚ի Պեռլին . իրենց մասնաւոր նպատակն է արևմտեան կողմերը քննել հիւսիսային լայնութեան 5 աստիճանէն՝ հարաւային 5 աստիճանի միջոց :

ԲԵԻԵՌԱՅԻՆ ՆՈՐ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆՔ

Երկրիս բևեռային կողմերու ծանօթութեան փափագն և քննութիւնննոր չէ , բայց աւելի մեծ ջանքով և հնարքներով քննելն՝ 8 կամ 10 տարիէ վեր է . յորում ամեն մեծ և նաւազօր ազգք խնդրակներ և քննիչներ խաւրած են կամ պատրաստուեր են խաւրել հիւսիսային բևեռին սահմանները . Անգղիացիք , Ամերիկացիք , Փռանկք , Շուետք , Ռուսք , Գերմանացիք և Աւստրիացիք : Ետքիններս՝ որ ծովային զօրութեան մէջ նորընծայ կրնան ըսուիլ՝ գիտնականութեամբ թերևս քան զբազում ազգս և քննողս առաւելեալ են , անոր համար իրենց նուիրակքն ալ աւելի ուսումնական քննութիւններ ընելու պատրաստուեր էին քան աշխարհագրական գիւտեր , թէ և հասարակաց գլխաւոր հետաքննութիւնն է գտնել կամ գիտնալ թէ երկրիս մինչև ցարդ անմեր-

ձենալի եղած երկու ծայրերն , (և մասնաւորապէս Հիւսիսայինն՝ որուն կրցեր են աւելի մօտենալ ,) ինչ գաղտնիք ունին . արդեօք ցամաք երկիր կայ ինչուան 90° , որ է ըսել ծայր կամ բևեռ երկրագնտիս , թէ ովկիանոս ծովն է շրջապատ . և եթէ ծով է՝ արդեօք մըշտընջենաւոր սառամանեօք կարծրացեալ է , եթէ լոյծ և արձակ մասեր ունի , գոնէ տարւոյն տաք եղանակին : — Ինչուան հիմայ եղած բազմավտանգ և բազմաժախ նաւարկութիւնք և հետազօտութիւնք՝ չկարցան լուծել այս տարակոյսները . դեռ խորհրդաւոր ծածկոյթ մը կայ բևեռաց ծայրը . գրեթէ 82 աստիճանէն վեր անցուած չէ , միով բանիւ ոչ դք յաջողեցաւ գլխաւոր դիտմանը . այլ գոնէ երկու մեծ վաստակ եղան : Մէկ մը՝ նորանոր ծանօթութիւնք այն հեռաւոր կողմերուն , թէ ծովուն յատկութեանց , թէ մերձաւոր ցամաքաց ձևերուն , ինչպէս են Սբիցպէրկ , կրենլանտիա , Նոր Չեմլեա , և այլն , և ասոնց եզերաց բնութեան , թէ ծովային և ջրափնեայ կենդանեաց , թէ բուսական աշխարհի , թէ ուրիշ բնական երևութից , ինչպէս հիւսիսայգն , մագնիսութիւնն , և այլն : Երկրորդ , որ աւելի պատուականն է , ընդարձակութիւն ջանից և գիւտից հանճարոյ , որ է ըսել մարդկային կարողութեան , բնութեան դժուարութեանց դէմ՝ մրցելու , և դիւրացուցիչ հնարքներով իր նպատակին դիմելու : Ասով է որ յետ այնքան անյաջող փորձից ալ՝ առջիններէն աւելի ջանքով և յուսով նորանոր հետազօտութիւնք կ'ըլլան և կը պատրաստուին , և դեռ անփորձք ալ ՚ի փորձ կը մտնեն :

Այս ետքիններէս էր Աւստրիա , ինչպէս վերը յիշեցինք , որ հազիւ երկու տարի յառաջ հրաւէր մը կարգաց իրեններուն բևեռախնդիր խուզարկութեան , տէրութեան գանձէն գումար մը նուիրելով , որուն վրայ կամաւոր նուէրքներ ալ ժողովելով՝ քիչ ատենի մէջ իբրև կէս միլիոն ֆրանգ հաւաքուեցաւ : Պրեմէնի նաւահանգիստը 220 տակառաչափի և 86 ձիու ուժով շոգենաւ մը